ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

1. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների բնագավառ

Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է ենթարկվել քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները, միջոցներ է ձեռնարկվել համապատասխան խնդիրներին լուծումներ գտնելու: Քաղաքացիներին տրամադրվել են համապատասխան փաստաթղթեր և տեղեկանքներ:

2020թ. հունվարի 08-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում համայնքապետարանում փաստաթղթաշրջանառությունը կազմել է՝

Մտից գրություններ -1040

Դիմումներ-191

Ելից գրություններ-887

Համայնքի ղեկավարն իր իրավասության շրջանակներում ընդունել է 362 իրավական ակտ, որից՝

Որոշումներ -317

Կարգադրություններ -45

Կայացել է համայնքի ավագանու 9 նիստ

Ավագանու կողմից ընդունվել է 70 որոշում:

Համայնքի ղեկավարը քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում սահմանել է խնամակալություն, հոգաբարձություն, իրականացվել է խնամակալության և հոգաբարձության մարմինների օրենքով վերապահված այլ լիազորություններ:

2020թ. ընթացքում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից գումարվել է 5 նիստ: Նիստերի արդյունքում 1 անչափահասի նկատմամբ սահմանվել է տեսակցության կարգ, 1 երեխայի նկատմամբ հոգեբարձության ճանաչում և 3 անչափահաս երեխայի գույքի վաճառքի մասին որոշումների ընդունում:

2. Տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության բնագավառ

Համայնքի բնակիչների համար ստեղծված են բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը:

Թալինի համայնքապետարանի պաշտոնականի կայքն է՝ **talin.am**

Թալինի համայնքապետարանի պաշտոնականի էլեկտրոնային հասցեն է՝ **taliniqaxaqapetaran@list.ru,**

Էջ սոցիալական ցանցում՝ ֆեյսբուքյան էջ, **<<Թալինի համայնքապետարան>>**

Թեժ գծի հեռախոսահամարը՝ **(+374) 024923138**

3. Ֆինանսական բնագավառ

2020թ.
Բյուջեի մուտքերը

199 485,2

հազար դրամ



Համայնքի 2020թ.բյուջեի եկամուտներն ըստ վարչական և ֆոնդային մասերի

Վարչական բյուջեի եկամուտներ **Ֆոնդային բյուջեի եկամուտներ**

Համայնքի 2020թ.բյուջեի կատարողականը

հազարդրամ

Հ/Հ	Ցուցանիշներ	Տարեկան պլան	Փաստացի կատարված պլան	%
1	Գույքահարկ	35100.0	31792.3	90.6
2	Հողի հարկ	5800.0	5895.5	101.6
3	Պետական տուրք	5000.0	4146.1	82.9
4	Տեղական տուրք	4530.0	4784.1	105.6
5	Այլ եկամուտներ	29372.1	28124.0	95.8
5.1	Որից գույքի և հողի վարձակալություն	4000.0	4832.2	120.8
5.2	ՔԿԱԳ՝ պետության կողմից	5354.1	5354.1	100
5.3	Այլ եկամուտներ	2518.0	2642.7	105
5.4	Տեղական վճարներ	17500.0	15295.0	87.4
6	Դոտացիա	124743.2	124743.2	100
6.1	Որից դոտացիա	106188.7	106188.7	100
6.2	Սուբվենցիա՝ ժող. գործիքների	3500.6	3500.6	100
Ընդամենը եկամուտներ		**204545.3**	**199485.2**	**97.5**

Համայնքի 2020թ. բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառնական դասակարգման հոդվածների (ոլորտների)

հազար դրամ

Հ/Հ	Ցուցանիշներ	Գումար	տես. կշիռ
Ընդամենը		**296073.7**	**100,0%**
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	123358.6	41.6
2	Պաշտպանություն	227.4	0.1
3	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0	
4	Տնտեսական հարաբերություններ	4380.5	1.4
5	Շրջակա միջավայրի պաշտպանություն	14500.0	4.9
6	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	33949.5	11.5
7	Առողջապահություն	0	

8	Հանգիստ, մշակույթ և կրոն	26470.0	9.0
9	Կրթություն	75982.7	25.6
10	Սոցիալական պաշտպանություն	1705.0	0.6
11	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	15500.0	5.3

4. Պաշտպանության կազմակերպման բնագավառ

Օրենքով սահմանված կարգով վարվում է համայնքի զինապարտների գրանցամատյանը, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացվում է տարածքային զինկոմիսարիատ: Ռազմակն դրության պայմաններում իրականացվել են համապատասխան միջոցառումներ զինկոմիսարիատից տրվող ծանուցագրերը համապատասխան անձանց ծանուցելու համար:

5. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառ

Իրականացվել են միջոցառումներ համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով: Կազմվել է աղետների ռիսկերի նվազեցման պլանը և ճշգրտվել է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը:

ԱԻՆ տարածքային ստորաբաժանման հետ անցկացվել է համատեղ վարժանքներ:

Գույքագրվել են համայնքում առկա նկուղները և ապաստարանները, իրականացվել է համապատասխան ամրագրում <<Օդային տագնապ>> ազդանշանի դեպքում բնակչությանը թաքստոցներով ապահովելու համար: Համայնքում տեղադրվել է մեկ նոր շչակ և 4 շչակ վերանորոգվել է: Թալինցի բարերարների աջակցությամբ ապաստարանները ապահովվել են՝ էլեկտրական գեներատորներով, ջրի պլաստիկ տարաներով և մարտկոցային լուսատուներով:

6. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

*Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատողին տրվել է 49 ճարտարապետահատակագծային առաջադրանք:

*Տրվել է 42 շինարարության թույլտվություն:

*Սահմանված կարգով ձևակերպվել է 15 ավարտված շինարարության շահագործման փաստագրում:

*Սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների նկատմամբ:

*Իրականացվել է համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների, գույքի ամենամյա հաշվառում, գույքագրման փաստաթղթերը ներկայացվել է ավագանու հաստատմանը:

*Իրականացվել է 7 աճուրդ:

*Կատարվել է անշարժ գույքի 50 հասցեավորում:

2020թ. ընթացքում համայնքապետարանի և ՀՀ կառավարության կողմից համայնքներում տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրով իրականացրել է 439 239 482 ՀՀ դրամի աշխատանք , մասնավորապես՝

1) Մյասնիկյան, Թումանյան, Թումանյան 2-րդ նրբ, Տերյան1-ին նրբանցք, Մեխանիզատորների, Կոմիտաս, Շիրազի, Թամանցիների, Սայաթ-Նովա, Ալբերտ Խաչատրյան փողոցների ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգման աշխատանքներ: Ընդհանուր բյուջեն կազմել է 346 338 896 ՀՀ դրամ, որից համայնքի կողմից ներդրվել է 173 169 434 ՀՀ դրամ:

2) Քոթանյան, Ժիրայր Ավետիսյան, Ռենե Լևոնյան, Այգեստան, Գայի 2-րդ նրբանցք, Մեխանիզատորների 2-րդ նրբանցք, Թումանյան 1-ին նրբանցք, Սայաթ-Նովա 2-րդ նրբանցք, Սարյան 1-ին նրբանցք փողոցների գիշերային լուսավորության անցկացման, 16 փողոցների թվով 120 լուսամփոփների փոխարինում լեդ լուսամփոփներով եվ ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքներ: Ընդհանուր բյուջեն կազմել է 28 311 040 ՀՀ դրամ, որից համայնքի կողմից ներդրվել է 12 739 968 ՀՀ դրամ:



3) Համայնքապետարանի դահլիճի, ջեռուցման համակարգի և 3 սենյակների հիմնանորոգման աշխատանքներ: Ընդհանուր բյուջեն կազմել է 21 412 402 ՀՀ դրամ, որից համայնքի կողմից ներդրվել է 13 918 061 ՀՀ դրամ:

4) N3 մանկապարտեզի խաղահրապարակի բարեկարգման և սպորտային դահլիճի հիմնանորոգման աշխատանքներ: Ընդհանուր բյուջեն կազմել է 21 105 371 ՀՀ դրամ, որից համայնքի կողմից ներդրվել է 9 497 416 ՀՀ դրամ:

5) Խանջյան 21, 23 բազմաբնակարան շենքերի կտուրների և Տերյան 26 բազմաբնակարան շենքի մուտքերի հիմնանորոգման աշխատանքներ: Ընդհանուր բյուջեն կազմել է 22 071 800 ՀՀ դրամ, որից համայնքի կողմից ներդրվել է 9 932 310 ՀՀ դրամ:



6) ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիայի և Թալինի համայնքապետարանի միջոցներով հիմնանորոգվել է կենտրոնական այգում գտնվող ֆուտբոլի մարզադաշտը:

7) ՀՀ կառավարության և Թալինի համայքապետարանի միջոցներով կառուցվել է Թալինի ջրամբարց ղեպի քաղաք հոսող ոռոգման ջրի ներքին ցանցը: Ընդհանուր բյուջեն կազմել է 25 460 200 ՀՀ դրամ, որից համայնքի կողմից ներդրվել է 1 802 000 ՀՀ դրամ:

8) ՀՀ կառավարության միջոցներով հիմնանորոգվում է Մ9 միջպետական ճանապարհի Թալին համայնքով անցնող հատվածի ասֆալտբետոնե ծածկը, որն ընդգրկում է Թալին համայնքի՝ Քոթանյան, Սպանդարյան և Գայի փողոցները, որտեղ հիմնանորոգվում է նաև խմելու ջրի և կոյուղու ներքին ցանցը, կառուցվում է նոր ջրատար, վերջինիս նախագծային աշխատանքները իրականացվել է համայնքի միջոցներով:

7. Հողօգտագործման բնագավառ

Վերահսկողություն է իրականացվել համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

8. Առևտրի և ծառայությունների բնագավառ

*Տրամադրվելէոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման 39 թույլտվություն:

*Հանրային սննդի կազմակերպման և իրացման 9 թույլտվություն:

* Զվարճանքի օբյեկտների ժամը 24.00-ից հետո աշխատելու 1 թույլտվություն:

*Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առքուվաճառքի 3 թույլտվություն:

*Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի 7 թույլտվություն:

* Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի 4 թույլտվություն:

*Թալին համայնքի խորհրդանշանները (զինանշան, անվանում և այլն)որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու 1 թույլտվությույն:

* Արտաքին գովազդ տեղադրելու 4 թույլտվություն:

9.Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ

Իրականացվել են համայնքի ենթակայության ՀՈԱԿ-ների նյութատեխնիկական բազայի թարմացման աշխատանքներ:

Կրթամշակույթային ՀՈԱԿ-ների կողմից ծառայություններ ստացողների ընդհանուր քանակը կազմում է ՝523, որից

Երաժշտական դպրոց – 125

Մշակույթի կենտրոն – 120

Գեղարվեստի դպրոց – 112

Մանկապարտեզ – 126

Մարզադպրոց - 40

Համայնքային միջոցառումներ չի իրականացվել կորոնավիրուսի հետ կապված:

10.**Առողջապահության բնագավառ**

Կազմակերպվել է հարային լսումներ Թալինի բժշկական կենտրոնի վերանորոգման հարցով:

11.Սոցիալական պաշտպանության բնագավառ

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին, արցախյան ազատամարտի մասնակիցներին, զոհվածների ընտանիքներին, ապրիլյան քառօրյաի մասնակիցներին՝ մասնավորապես 131 ընտանիք ստացել է դրամական օգնություն:

Սոցիալապես անապահով ընտանիքների 38 երեխայի <<Դիակոնիա>> բարեգործական հիմնադրամի աջակցությամբ տրվել է ամենամսյա սնունդ օգնություն:

Օգնություն է տրամադրվել Թալին համայնքում ժամանակավոր բնակվող Արցախի հանրապետությունից ժամանած ընտանիքներին:

12.Գյուղատնտեսության բնագավառ

ՀՀ կառավարության աջակցության ծրագրով բնակչությանը ինքնարժեքից ցածր գներով տրվել է սերմեր:

Իրականացվել է ընտանի կենդանիների հաշվառում, որի արդյուքի հիման վրա կատարվել է կենդանիների պատվաստում: